

ՀԱՅ ԲԺԻՇԿԸ

Բարեկամիս՝ տոբթ. Ռ. Պազարճեանին
 Իրա՛ւ. գիտե՛ս ըսպաննել Մահը, խեղդել
 Ոսկըրներու, ջըղերու մէջ, գետեղել
 Գլուխդ հեգերուն խոր լուրծքին.
 Յանդուզն գործ՝ ուր կայ վըտանզն ահարկու
 Խաբուած սիրոյ ըմբոստութեան դիպելու,
 Կամ հիւծախտի մը յործքին:
 Գիտե՛ս համրել բաբախումները սըրտին,
 Կեանքին քայլերն՝ որոնց ներքեւ կը թափին
 Մեռած կրակներն այտերէ:
 Հին սուրբի պէս դու բարի ես եւ կարո՞ղ.
 Չերդ մանգաղուած կակաչներու ինկած շող՝
 Սիրտըդ վերքե՞ր կ'համբուրէ:
 Արդ, եկո՛ւր, ո՛վ եղբայր, ծընած՝ չըգիտեմ
 Արզանդէն ո՛ր յի վարսամին լուսադէմ:
 Եկո՛ւր, թռչքիս վրայ գերդ ճայ՝
 Թեզ պիտ' տանիմ Աշխարհ մ'անհո՛ւն գերեզման,
 Որուն վերեւ կախուած արփին, լուսընկան
 Դամբանի միշտ կ'ըլլան ջահ:
 Հոն հիւղէ հիւղ տըրտում քալես պիտի դուն՝
 Բանալով խուլ ողբի դըռները զաղփուն.
 Վերմակներէ դուրս՝ նիհար
 Թեւեր քեզի պիտ' երկըննան վերամբարձ.
 Պիտի շողայ մըրոտ խըրճիթը յանկարծ
 Իբրեւ ոսկւոյ հանք մ'ըլլար:
 Ու առջեւդ հոն պիտի տեսնես մահահոտ
 Էակներու գալարուող կոյտ մ'հիւանդոտ,
 Թաց խորշերու մէջ՝ տըժգոյն